12/12/2019թ. <<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ
ժամը $11^{30}$ թիվ՝ 2 ք. Երևան Ֆանարջյան փ. 76 շ.

Արձանագրություն
*ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/3 ծածկագրով գնման ընթացակարգի*
*գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի*
*Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝*

**գնահատող հանձնաժողովի նախագահ**
/դեղատան վարիչ/ Ն. Գասպարյան
**հանձնաժողովիանդամներ**
/դեղագետ/ Մ. Թովմասյան
/դեղագործ/ Ս. Անանյան
/հաշվապահ/ Ն. Դավթյան
/օպերատոր/ Օ. Մանուկյան
**Հանձնաժողովի քարտուղար՝**
Արմեն Խաչատրյան

*ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված*

**Հայտերի բացման մասին**

---

**Հանձնաժողովի նիստի նախագահ՝ Ն. Գասպարյան**

**1. Ընդունել ի գիտություն որ՝**
1.1 Գնման ընթացակարգի հրավերը, 27/11/2019թ-ին հրապարակվել է www.armeps.am համակարգում և տեղեկագրում:
**2. Հայտեր ներկայացրել են հետևյալ մասնակիցները՝**
Վիգ Ֆարմ ՍՊԸ Հարկային կոդ՝ 04431289,Հասցե՝ ք"Վաղարշապատ Շահումյան փ. 17ա, Էլեկտրոնային փոստ vigpharm@mail.ru
**3. Հայտ ներկայացրած մասնակիցների հայտերում ներառված փաստաթղթերի համապատասխանության և մերժված հայտերի մասին**
3.1 Մասնակիցների ներկայացրած էլեկտրոնային հայտերը www.armeps.am համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի.
3.2 Մասնակիցները հայտում ներառված փաստաթղթերը կազմել և ներկայացրել է հրավերի պահանջներին համապատասխան.
Ընդունել որոշում ***կողմ 5 (հինգ), դեմ 0 (զրո)*** ձայներով.

**4. Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացրած պարզաբանումների մասին՝**
4.1 հարցումներ և պարզաբանումներ չեն եղել

5. <u>Ներկայացված բողոքների և դրանց վերաբերյալ կայացված որոշումների մասին՝</u>

5.1 Բողոքներ չեն եղել:

6. <u>Հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին՝</u>

6.1 Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել

7. <u>Ներկայացված գնի առաջարկների մասին</u>

| չ/հ | ապրանքի | | | մասնակցի անվանումը և գնային առաջարկը | |
|---|---|---|---|---|---|
| | անվանումը | չ/մ | քանակ | Վիգ Ֆառմ ՍՊԸ | ԱԱՀ |
| 1 | Ֆտորուրացիլ | հատ | 600 | 2106000 | առանց աահ |
| | | | | 234000 | շահույթ |
| | | | | | աահ |
| | | | | 2340000 | ընդհանուր |
| 10 | դոցետաքսել | տուփ | 200 | 7740000 | առանց աահ |
| | | | | 860000 | շահույթ |
| | | | | | աահ |
| | | | | 8600000 | ընդհանուր |

8. <u>Չկայացած չափաբաժինների մասին</u>

8.1 Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով որոշեց՝ գնման ընթացակարգը 2-9-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած, քանի որ նշված չափաբաժինների մասով ոչ մի հայտ չի ներկայացվել:

Ընդունել որոշում ***կողմ 5 (հինգ)***, ***դեմ 0 (զրո)*** ձայներով

9. <u>Կազմակերպված բանակցությունների և հայտերի բացման նիստի կասեցման մասին</u>

9.1 Գնահատող հանձնաժողովը Ղեկավարվելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով, որոշեց՝ կասեցնել հայտերի բացման նիստը ու առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով մասնակիցներին հրավիրել բոլոր չափաբաժինների մասով գների նվազեցման բանակցությունների: Քանի որ սույն գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Բանակցությունները վարվելու են <<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանությանազգային կենտրոն>> ՓԲԸ-ում, հասցե՝ ք. Երևան, Ֆանարջյան փ. 76 շ:

Բանակցությունների վարման սկիզբն է՝ բանակցությունների վարման մասին ծանուցումն մասնակիցներին ուղարկելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրվա ժամը 11:00-ն իսկ բանակցությունների վարման վերջնաժամկետն է՝ նույն օրվա օրվա ժամը 11:30-ն:

Ընդունել որոշում **կողմ *5 (հինգ)*,  դեմ *0 (զրո)*** ձայներով

**<u>10. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին</u>**

10.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել բանակցությունների վարման օրը և ժամին.
Ընդունել որոշում ***կողմ 5 (հինգ),  դեմ 0 (զրո)*** ձայներով

**գնահատող հանձնաժողովի նախագահ**
/դեղատան վարիչ/ Ն. Գասպարյան ____________

**հանձնաժողովիհանդամներ**
/դեղագետ/ Մ. Թովմասյան ____________

/դեղագործ/ Ս. Անանյան ____________

/հաշվապահ/ Ն. Դավթյան ____________

/օպերատոր/ Օ. Մանուկյան ____________

**Հանձնաժողովի քարտուղար՝**
Արմեն Խաչատրյան ____________